

Բարև ձեզ: Ջոն Մյուիր միջանկյալ դպրոցի տնօրեն դոկտոր Միլլերն է զանգահարում այս շաբաթվա նորությունների թողարկումով: Այս շաբաթ, չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերին, Մյուիր դպրոցի բոլոր աշակերտները կհանձնեն տարեվերջյան քննությունները: Չորեքշաբթի օրը կհանձնեն 3-րդ և 6-րդ դասերի քննությունները, հինգշաբթի՝ 1-ին և 4-րդ, իսկ ուրբաթ՝ 2-րդ և 5-րդ: Հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 6-ին, Դոլորես Հուերտա միջանկյալ դպրոցն առցանց հանդիպում է կազմակերպել «Խելամիտ երեխաների դասիարակումը թվային դարաշրջանում» խորագրով: Երեկոյի ընթացքում ելույթ կունենա ազգայնորեն ճանաչված հյուրը, ով կխոսի սոցցանցերի, խաղերի, կիրառական ծրագրերի մասին և ինչպես օգնել երեխաներին օգտվել դրանցից: Խնդրում ենք օգտվել կցված թերթիկից հավելյալ տեղեկություն ստանալու համար: Բոլոր աշակերտները, մինչև շաբաթվա վերջը, պետք է դպրոցին վերադարձնեն բոլոր դասագրքերն ու գրադարանի գրքերը: Վերջում ցանկանում եմ ավելացնել, որ հաջորդ շաբաթ, հինգշաբթի օրը, մայիսի 26-ը կհանդիսանա ուսումնական տարվա վերջին օրը և դասերը կավարտվեն կեսօրից հետո ժամը 12:33-ին:

Շնորհակալություն և հաջողություն եմ ցանկանում: